



Բաց մրցույթ. ԱԱ / FF / GG

Գալուստ Կիլպենկեան Հիմնարկութիւնը տարիներէ ի վեր կը համագործակցի Անատոլու Քիլթիւր կազմակերպութեան հետ. այժմ Հիմնարկութիւնը կաշխատի այս մշակութային հաստատութեան հետ մեկնարկելու արուեստագէտներու փոխանակումի նոր ծրագիր մը՝ *Սպագայի Սպագան*, որ կը միտի երիտասարդ հայ եւ թուրք արուեստագէտներ քով-քովի բերելու եւ անոնց ստեղծագործ ուժերը համատեղելու: Իրենց համատեղ ստեղծագործութիւններուն ընդմէջէն, ընտրուած արուեստագէտները պիտի երեւակայեն հասարակութեան ապագան, եւ այս գործերը պիտի ցուցադրուին տարբեր տեղեր եւ զանազան ցուցահանդէսներու մէջ: Դիմումները բաց են, վերջնաժամկետը յուլիս 31-ն է. բոլոր մանրամասնութիւնները հրապարակուած են Անատոլու Քիլթիւրի [կայքէջին](#) մէջ:

Անատոլու Քիլթիւրը հիմնուած է 2002-ի [Օսման Քաւալայի](#) կողմէ: Ճիշդ է որ Քաւալայի [բանտարկութիւնը](#) Անատոլու Քիլթիւրի համար մեծ հարուած մը եղաւ, սակայն ուրախ ենք որ հաստատութիւնը կը շարունակէ իր գործունէութիւնը տեղական եւ միջազգային օժանդակութեան շնորհիւ: